ած էին սէիդներից, որոնք գործում էին, ինչ որ կամենում էին: Աշխարհի դատարանները պատժի ենթարկել նրանց չէին կարող. ստոր մահկանացուն իրաւունք չունէր դատել երկնքի որդիներին, եւ դրա համար սէիդներն անձնատուր էին եղած իրանց անսանձ կամայականութեանը: Այս որպէիս էլ սարսափում եմ ես, երբ մտաբերում եմ այն բոլոր չարագործութիւնները, որ անում էին այդ անիրաւները. որքա՜ն աւերմունքի, որքա՜ն արեան, որքա՜ն ընտանիքների աղքատութեան պատճառ էին դառնում նրանք...

Ատրպատականը Պարսկաստանի մէկ մասն էր, բայց նա իբրեւ ֆէօդալական երկիր (մուլքը թաւաիֆ), բաժանուած էր զանազան խաների, բեկերի, շահզադաների եւ այլ ազնուական տների մէջ: Նրանք, կոչւում էին աղաներ: Աղաները համարւում էին բարձրագոյն դռան կամ շահի վասալներ: Բացի աղաներից, կալուածական բաժիններ ունէին մեծ մօլլաները, որպէս հոգեւորականութեան ներկայացուցիչներ եւ սէիդներ, որպէս մեծ մարգարէի որդիներ: Վասալները երբեմն վճարում էին շահին իրանց կալուածների հասոյթից մասնաւոր տուրք, պատերազմի ժամանակ օգնում էին նրան, իսկ շատ անգամ, ապստամբելով, ոչ առաջին պարտաւորութիւնն էին կատարում եւ ոչ վերջինը: Քիչ չէր պատահում, որ նոյնիսկ խաները, բեկերը, շահզադաները միմեանց դէմ պատերազմ էին յարուցանում, յարձակւում էին միմեանց երկրի վրայ, աւերում էին, հրդեհում էին, թալանում էին եւ գերիներ էին տանում: Գերին նրանց համար նոյնպէս մի ապրանք էր, որպէս տնային կայքը, որովհետեւ յետոյ վերադարձնում էին, նրա փոխարէն փրկանք ստանալով: Այս պատճառով կռիւը եւ թշնամական յարաբերութիւնը ֆէօդալական իշխանների մէջ մնում էին անխզելի:

Եւ այսպէս, բոլոր գիւղորայքը բաժանուած էին աղաների մէջ. շատ տեղ մի գիւղը ունէր մի քանի աղաներ: Բայց թէ կառավարութեան ձեւը, թէ աղաների յարաբերութիւնները կամ նրանց պայմանները գիւղացիների հետ այստեղ այնպէս չէին, ինչպէս որ էր Վասպուրականի եւ Տարօնի նահանգներում, ուր տիրապետում էին քրդերը: Ատրպատականում աղան համարւում էր կալուածատէր: Հողը — մի ժամանակ նրան շահից շնորհուած, որպէս աղբիւր իր վասալի ապրուստը բաւականացնելու սերունդից սերունդ անցնելով եւ պատմական փոփոխութիւնների պատճառով, — դարձել էր նրա սեփականութիւն: Նա իրաւունք ունէր գրաւ դնելու իր հողը, վաճառելու եւ ամէն կերպ նրանից շահուելու: Բայց քրդերը կալուածատերէր չէին. նրանց մէջ աղաներից մէկը սեփականացնում էր սրի ուժով մի կտոր հող, միւս աղան, աւելի զօրեղ գտնուելով, խլում էր նրա ձեռքից, եւ այսպէս հողը անդադար անցնում էր մի աղայից դէպի միւսը: